<u>Նախագիծ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՈՐՈՇՈՒՄ

2009 թվական N -----------Ն

## ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 505-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ագարակաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.04 հեկտար վարելահողը՝ համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկներ կառուցելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխումից հետո երեք տարվա ընթացքում չկառուցապատելու դեպքում սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը չեղյալ է համարվում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ագարակաձորի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել.

1) հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

2) Սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով գանձված ֆինանսական միջոցները ուղղել համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կամ գլխավոր հատակագծի կազմմանը:

4.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին՝ հսկողություն իրականացնել սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերի կատարման նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հողերի կատեգորիան փոխելու մասին » ՀՀ կառավարության որոշման նախագծի

ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան հողերի նպատակային նշանակության փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը՝ հողաշինարարական ու քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ագարակաձորի համայնքի ղեկավարը հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով ներկայացրել է՝

1) համայնքային սեփականության 6.55 հեկտար հողերը փոխադրել՝

ա/ 5.84 հեկտար այլ հողերը՝ ջրային հողերի կատեգորիա.

բ/ 0.71 հեկտար այլ հողերը՝ բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման համար:

2) Քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.04 հեկտար հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկներ կառուցելու համար:

Ներկայացված որոշման նախագծով նախատեսվում է քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.04 հեկտար վարելահողը տեղափոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկներ կառուցելու համար:

Կատեգորիայի փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված տարածքները գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար պիտանի չեն, հողամասերը երկար տարիներ չեն մշակվել, ուստի նպատակահարմար է այն օգտագործել այլ նպատակով:

Միջգերատեսչական հանձնաժողովը նպատակահարմար չի գտնում համայնքային սեփականության հողերի նպատակային նշանակության փոփոխությունները, ուստի ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվող տարբերակում վերոգրյալ հողամասերի փոխադրումը չի արտահայտված:

Միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի փոփոխությունը համաձայնեցվել և հաստատվել է ՀՀ քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության կողմից:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի փոփոխման վերաբերյալ առկա են մարզպետի համաձայնությունը :

**Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ** Վ. Տերտերյան

Հավելված

ՀՀ կառավարության 2009թվականի
.............................. „..........-ի„
N ..........Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ




* Ծանոթագրություն

① արդյունաբերության, ընդերքօգտ. և

այլ .. 0.04 հա

/քաղաքացիների սեփ. հողերից/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ- Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 13.08.01 թ. N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի

Հանձնաժողովը 2007 թվականի հուլիսի 11-ի նիստում քննարկելով Վայոց Ձոր մարզի Եղեգնաձորի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, առաջարկում է այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ֆ. Եգորյան

անդամներ՝ Ս. Մկրտչյան

Ս. Ծաքարյան

Ա. Վարդանյան

Ա. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374+1/ 287401, /374+81/ 22522
Ֆաքս /374+1/ 281832

N 671 «10» հուլիսի 2007թ

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ձեր համաձայնեցմանն է ներկայացվում ՀՀ Կառավարության 2004թ. ապրիլի 14-ի N 505-Ն որոշմամբ հաստատված Ագարակաձոր համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու առաջարկը:

Վ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ВАЙОЦ ДЗОР
АГАРАКАДЗОРСКАЯ ОБЩИНА

3602 գ. Ագարակաձոր
v. Agarakadzor

հեռ. 2-20-80
tel 2-20-80

«02» հունիսի 2007թ

№ 27

# ՔԱՂՎԱԾՔ

## Ագարակաձոր համայնքի ավագանու «15» մայիսի 2007թ. նիստի արձանագրությունից

Օրակարգում՝ ՀՀ կառավարության կողմից 2004թ. ապրիլի 14-ի թիվ 505-Ն որոշմամբ հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարել, այն է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի՝

ա/ 5.84հա այլ հողերից փոխադրել ջրային հողերի կատեգորիա ձկնատնտեսություն կազմակերպելու համար:

բ/ 0.71հա այլ հողերից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման (սննդի և առևտրի օբյեկտներ) համար:

գ/ Քաղաքացու սեփականության հողերից 0.04հա վարելահող փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա ջերմոցային տնտեսություն ստեղծելու համար:

Արտահայտվեցին՝ Ավագանու անդամներ՝ Ս.Կարապետյանը, Ճ.Սարգսյանը, Բ.Ներսիսյանը և առաջարկեցին տալ համաձայնություն վերոնշված 5.84հա այլ հողեր փոխադրել ջրային հողերի կատեգորիա ձկնատնտեսություն կազմակերպելու համար, 0.71հա այլ հողերից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման համար, 0.04հա քաղաքացու սեփականության հողերից փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ ջերմոցային տնտեսություն կազմակերպելու համար:

### Ավագանին որոշեց՝

Խնդրել ՀՀ կառավարությանը 14.04.2004թ. թիվ 505-Ն որոշմամբ հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և թույլատրել համայնքային սեփականություն և քաղաքացու սեփականություն հանդիսացող հողերից՝

ա/ 5.84հա գյուղնշանակության այլ հողերից փոխադրել ջրային հողերի կատեգորիա ձկնատնտեսություն կազմակերպելու համար:

բ/ 0.71հա այլ հողերից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման համար:

գ/ Քաղաքացու սեփականության հողերից 0.04հա վարելահող փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա ջերմոցային տնտեսություն կազմակերպելու համար:

Համայնքի ղեկավար՝ Դ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ВАЙОЦ ДЗОР
АГАРАКАДЗОРСКАЯ ОБЩИНА

3602 գ. Ագարակաձոր
v. Agarakadzor

հեռ. 2-20-80
tel 2-20-80

«02» հունիսի 2007թ                                                  № 26

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության կողմից 14.04.2004թ. Թիվ 505-Ն որոշմամբ հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն: Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության այլ հողերի վրա համայնքի բնակիչների կողմից պահանջարկ կա ձկնատնտեսությամբ զբաղվելու, հասարակական օբյեկտներ կառուցելու և ջերմոցային տնտեսություն ստեղծելու: Քանի որ այդ տարածքները գյուղատնտեսական նպատակով օգտագործման համար պիտանի չեն և հնարավոր է այդ տարածքները օգտագործել հասարակական, արտադրական նպատակներով, որը հնարավորություն կտա ժողովրդին նոր աշխատատեղեր ստեղծելու, ուստի նպատակահարմար ենք գտնում կատարել համապատասխան փոփոխություններ՝ 5.84հա գյուղ նշանակության այլ հողեր փոխադրել ջրային հողերի կատեգորիա ձկնատնտեսություն կազմակերպելու, 0.71հա գյուղ նշանակության այլ հողեր փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման (սննդի և առևտրի օբյեկտներ) համար, քաղաքացու սեփականության վարելահողից 0.04հա փոխադրել այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա ջերմոցային տնտեսություն կազմակերպելու համար:

Համայնքի ղեկավար՝ [signature] Դ.Մարտիրոսյան

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վայոց Ձոր մարզի համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման համար ստեղծված մարզային հանձնաժողովը՝ քննարկելով Ագարակաձոր համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու առաջարկը տալիս է իր համաձայնությունը՝

ա/ 5.84հա գյուղատնտեսական նշանակության այլ հողերից փոխադրել ջրային հողերի կատեգորիա ձկնատնտեսություն կազմակերպելու համար:

բ/ 0.71հա այլ հողերից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման համար:

գ/ Քաղաքացու սեփականության հողերից 0.04հա վարելահող փոխադրել այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա ջերմոցային տնտեսություն ստեղծելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մաթևոսյան /ՎՁՄ. մարզպետ/

Անդամներ՝ Ա.Գրիգորյան /ՏԿՎ. պետ/

Բ.Մկրտչյան /ԳՎ. պետ/

Ա.Հովսեփյան /ՔՇՎ. պետ/

Մ.Մեսրոպյան /ՀՇԲ. պետ/

Ռովլաթյան /ՀՊԳ գլխ.մասն/

Գ. ազարյան /Եղեգն. կադ. պետ/

Գրիգորյան /ԲՊՏԿՁ բաժնի պետ/

Հայրապետյան /ՀՇԲ մասնագետ/

[illegible] (diagonal handwritten resolution with signatures in the upper left margin)

Գյուղապետին Ա. Մարգարյանին
Նոյեմ գյուղի բնակիչ Հրաչիկ
Մարգարյանից

Դիմում

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ պատրաստ եմ ինձ սեփականաշնորհված 0,04 հա հողատարածքում կառույցը ձեռնարկությանը վերադարձնել։

Դիմող՝ ստորագր. Հ. Մարգարյան
22.06.07թ.

06
22.06.07թ

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է _սեփականության_ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
սեփականության (oգտագործման)

_Հրաչիկ Մարտիրոսյանին_
(սեփականատիրոջ (oգտագործողի) անունը (անվանումը))
_Անժիկ Սարգսյանին_
_Հարիկ Մարգարյանին_
_Վահան Մարտիրոսյանին_

_Վայոց Ձորի մարզ գյուղ Աղավնաձոր_
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)
_գյուղի վարչության_ ՆԿԱՏՄԱՄԲ
_Աղավնաձորի սեփ. հանձնաժողովի 21.03.91թ._
(անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)
_N2 որոշման և 22.10.01թ N.3 պայմանագրի_ ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
_10-004-42_ ՄԱՏՅԱՆԻ _0807_ ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ _Գ. Մարգարյան_
(ստորագրությունը)

Կ. Տ.

«_25_» _[illegible]_ 20_01_ թ.

482452

Վկայականի համարը

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 121-012

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ գյուղ. նշանակության

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ գյուղ. վարելահող

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 0,3517

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ համասեփականություն

## ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

## ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարողներ՝

(ստորագրությունները)

